ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«28» մայիսի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի ստեփանավանցիներ

Այսօր մենք նշում ենք Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման և մայիսյան հերոսամարտերում տարած հաղթանակների 107-ամյակը:

Այս նշանակալի օրվա առթիվ սրտանց շնորհավորում եմ բոլորիս:

Անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծումը կարևոր պատմական իրադարձություն էր, որը հիմք դրեց մեր պետականության վերականգնմանը:

Պետական ինքնիշխանությունն ազգային ինքնության, հոգևոր և մշակութային արժեքների պահպանման, ինչպես նաև մեր՝ որպես ազգ, գոյատևման առանցքային պայմանն է:

Այսօր մեր երկիրը բախվում է լուրջ մարտահրավերների ու չլուծված խնդիրների, սակայն մեր ամուր հենարանը շարունակում է մնալ պետականությունը:

Յուրաքանչյուրս պարտավոր ենք մեր ներդրումն ունենալ այն պահպանելու կարևոր գործում:

Մաղթում եմ խաղաղություն, միասնություն և բարօրություն բոլորիդ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ